ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք.Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. /374010/ 287401, 2 25 22**

<<__19___>>_____01_____2017թ. **N_____** **Ֆաքս /374010/ 28 18 32**

<<Հետք>> ԹԵՐԹԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ

ՊԱՐՈՆ Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բաղդասարյան

Ի պատասխան Ձեր 14.01.2016 թվականի ՀՔ-16-12/04 գրության, տեղեկացնում ենք՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը, որպես պատվիրատու, մշտապես հետևել է մարզի հանրակրթական դպրոցներում կատարվող շինարարական աշխատանքների ընթացքին: ՀՀ Վայոց ձորի մարզի դպրոցներում կատարված շինվերանորոգման աշխատանքների ավարտից հետո, սահմանված կարգով կազմվել է ընդունման հանձնման ավարտական ԱԿՏ-եր, որոնք ստորագրվել են ընդունող հանձնաժողովների կողմից:

   Ավարտից հետո մեկ տարվա ընթացքում հայտնաբերված բոլոր թերությունները վերացվել են շինարարական կազմակերպությունների կողմից, իսկ մեկից մինչև երեք տարիների ընթացքում շինարարների կողմից վերացվել են այն թերությունները, որոնց առաջացման պատճառը կապված է եղել շինարարական աշխատանքների հետ: Վերը նշված ժամանակահատվածներում հայտնաբերված թերությունները ամբողջապես վերացվել են:

2. Տեղեկացնում ենք, որ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում քննարկվել է ՀՀ Վայոց ձորի մարզի դպրոցների վերաբերյալ 23.07.2016 թվականի <<Հետքի>> հրապարակումը: Հայտնում ենք, որ Ձեր կողմից նշված դպրոցներում հիմնանորոգումներ չեն իրականացվել, այլ կատարվել են փուլային վերանորոգումներ, որտեղ առաջնահերթությունը տրվել է դպրոցական շենքերը արտաքին միջավայրից կտրելուն՝ փոխվել են պատուհանները (անհրաժեշտության դեպքում փոքրացվել են

չափսերը), վերակառուցվել են տանիքները (ալիքավոր հերձաթերթերը փոխարինվել են ցինկաթիթեղով), կառուցվել են շենքերի կողային սալվածքները, կատարվել են սան-հանգույցների նորոգում, իրականացվել են կոսմետիկ ներքին հարդարման աշխատանքներ և վերակառուցվել են ջեռուցման համակարգերը: Նշենք, որ պարբերաբար ուսումնասիրվել է մարզի բոլոր դպրոցների տեխնիկական վիճակը, այդ թվում նաև Ձեր կողմից մատնանշված դպրոցները: Պարզվել է, որ դպրոցական շենքերի առաջին հարկերում առկա է խոնավություն, բորբոսած պատեր, որոնք արդյունք են գերխոնավ գրունտների առկայության, տանիքներից արտաքին սալվածքների վրա անձրևաջրերի ազատ հոսքի: Ավելացնենք, որ ձմռան ամիսներին դպրոցական շենքերն ամբողջապես չեն ջեռուցվում (միայն դասարաններն են ջեռուցվում, այն էլ դասաժամերի ընթացքում), ուստի ջերմաստիճանի խիստ տատանման հետևանքով շինության ներսում առաջանում է խոնավ միջավայր, որն էլ նպաստում է ներքին հարդարման վատթարացմանը և փչացմանը:

3. ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 3-ի «ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագրից բխող 2015-2020 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին N 1426-ն որոշմամբ նախատեսված գործընթացը ավարտվել է SSIP (սեյսմիկ անվտանգության բարելավման) ծրագրով Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ Եղեգնաձոր քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոցի նոր շենքի նախագծման աշխատանքները և եղանակային բարենպաստ պայմանների դեպքում կսկսվի շինարարության իրականացման աշխատանքները, որը կտեվի 2 տարի:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Եղեգնաձոր քաղաքի թիվ 1 միջնակարգ դպրոցի գոյություն ունեցող շենքը չի քանդվի և կպահպանվի այլ նպատակների օգտագործման համար:

Հարգանքով՝ **Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Կատարող՝ Ա. Հովսեփյան
հեռ. /0281/ 2-55-04